ՊԱՐՍԻՑ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎՆ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

Լ. Փ. ՇԱՀԻՆՅԱՆ

Խորենացու վկայություններով պարսից Արշակունի հարստության հիմնադրման թվականի որոշման հարցը նրա «Հայոց պատմության» երկրորդ ու երրորդ գրքերի ժամանակագրական համակարգի ելակետային հարցն է, ունի սկզբունքային կարևոր նշանակություն և նրանով է մասամբ պայմանավորված այդ համակարգի ճիշտ վերականգնումը։ Ուստի, սխալված չենք լինի, եթե սկսենք մեր խոսքը նախորդ ուսումնասիրություններում բազմիցս քննարկված Խորենացու համապատասխան վկայություններից։ Այսպես, «Հայոց պատմության» երկրորդ գրքի առաջին գլխում կարդում ենք.

«Յետ տիրելոյն ամենայն տիեզերաց Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, որդւոյ Փիլիպպեայ և Ոլոմպիադայ, որ էր քսան և չորրորդ յԱքիղղայ, բազմաց տալով զտէրութիւնն կտակաւ, զի ամենեցուն իշխանութիւն՝ Մակեդոնացւոցն անուանեսցի՝ ինքն մեռանի։ Զկնի որոյ թագաւորեաց Բաբելովնի Սելևկիոս, զյոլովից կորզելով զիշխանութիւն. ուստի և զՊարթևս հնազանդեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ Նիկանովր այնորիկ աղագաւ։ Սորա տիրեալ ամս երեսուն և սր՝ թողու զթագաւորութիւնն որդւոյ իւրում Անտիոքայ, անուանեցելոյն Սաւտէր, ամս ինն և տասն։ Զսա յաջորդէ Անտիոքոս, ասացեալն Թեոս, ամս տասն. և ի մետասաներորդին ապստամբեն Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն։ Ուստի և թագաւորեաց Արշակ Քաջ...»[1]։

Նույն գրքի երկրորդ գլխում, այս վկայությունը ավելի որոշակի դարձնելու նպատակով, Խորենացին անմիջապես շարունակում է.

«Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ ի քաղաքին, որ կոչի Բահդ Առաւստին, յերկիրն Քուշանացս»[2]։

Խորենացին ընդամենը այս երկու տեղեկությունն է հաղորդում, որոնք երկուսն էլ 60-ամյա միջանկյալ ժամանակաշրջան են արձանագրում։ Ինչպես տեսնում ենք, 60 տարի է թե՛ Սելևկոս Նիկատորի 1-ին տարվանից մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին (Սելևկոս Նիկատոր 31 + Անտիոքոս Սոտեր 19 + Անտիոքոս Թեոսի 10-ը), թե՛ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև Արշակունիների անկախացումը։ Երևում է միաժամանակ, որ այս համարյա հավասարազոր վկայություններից հիմնական և կողմնորոշող վկայությունը երկրորդն է, ուր Խորենացին ուշադրություն է հրավիրում Ալ. Մակեդոնացու մահվան թվականի վրա։ Այստեղից էլ պետք է ենթադրել, որ երկու դեպքում էլ Խորենացու համար ելակետային տարեթիվ է հանդիսացել Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը՝ 323 թ. (մ. թ. ա.), հետևաբար նրա երկու վկայու-

---

1 *Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 102։*

2 *Նույն տեղում, էջ 102—103։*

թյուններն էլ Արշակունիների անկախացման տարեթիվ են մատնանշում 263 թ. (մ. թ. ա.)[3]։

Չնայած այսքան պարզ վկայություններին, նախորդ ուսումնասիրողներից քչերն են միայն այսպես հասկացել Խորենացուն։ Այստեղ նկատի ունենք Գարագաշյանին և Գր. Խալաթյանին, որոնք հարևանցիորեն ակնարկել են լոկ, որ Խորենացին Արշակունիների համար սկզբնատարի է ընդունել 263 թ. (մ. թ. ա.)։ Ըստ որում, Գարագաշյանի ու Խալաթյանի այս ենթադրությունն էլ ոչ միայն ժամանակին համախոհներ չի գտել, այլև ենթարկվել է Հակոբ Տաշյանի խիստ քննադատության, անգամ հեգնանքին[4] և դատապարտվել է մոռացության։

Այս հարցով զբաղվող մնացած գրեթե բոլոր ուսումնասիրողները աշխատել են Խորենացու վկայություններն այլ ձևով մեկնաբանել և հիմնականում նրան առաջնորդել են Եվսեբիոս Կեսարացու հետքերով։ Պատճառն Անտիոքոս Թեոսի 11-րդ տարվա որոշման հարցն էր, որը զանազան աղբյուրներով և հատկապես Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությամբ մատնանշվում էր 250 թ. (մ. թ. ա.)։

Այսպես, Եվսեբիոսը իր հանրահայտ «Ժամանակագրության» երկրորդ մասում Արշակունիների անկախացման մասին գրում է.

«Պարթևք ի Մակեդոնացւոց ապստամբեցին. և ի նոցանէ թագաւորեաց Արշակ, ուստի և Արշակունիք»։ Եվսեբիոսի այս վկայությունը նրա ժամանակագրական աղյուսակում հիշատակված է՝ Հռոմի հիմնադրման Շ(500)-ից ՇԺ(510)-ի տասնամյակում, Աբրահամի ծննդից ՌՉԿԶ(1766) տարի անց, ՃԼԲ(132-րդ) օլիմպիադի 3-րդ, Պտղոմեոս Ֆիլադելֆոսի թագավորության ԼԴ(34-րդ), Մակեդոնական գահակալ Անտիոքոս Գոնատասի ԻԹ(29-րդ) և Սելևկյան գահակալ Անտիոքոս Թեոսի ԺԱ(11-րդ) տարիներին[5]։ Ինչպես երևում է, Արշակունիների անկախացման սկզբնատարին Եվսեբիոսը կապել է պատմական զանազան դեպքերի ու դեմքերի հետ, որոնք բոլորն էլ՝ թե՛ 132-րդ օլիմպիադի 3-րդ տարին, թե՛ Պտղոմեոս Ֆիլադելֆոսի թագավորության 34-րդը, թե՛ Անտիոքոս Թեոսի 11-րդը և թե մյուսները մատնանշում են միևնույն 250 թ. (մ. թ. ա.)։

250 թ. իբրև Անտիոքոս Թեոսի թագավորության 11-րդ տարի, հետևաբար իբր Արշակունիների անկախացման տարեթիվ, կարելի է ենթադրել նաև Եվսեբիոսի հետևյալ ժամանակագրական տեղեկություններից։

Ա. Եվսեբիոսի օլիմպիական հաշվումներով Անտիոքոս Թեոսի թագավորության սկիզբը դրված է 129-րդ օլիմպիադի 4-րդ տարում[6], որը լինելու է 260 թվականը (մ. թ. ա.), ուստի պարզ է, որ նույն արքայի 11-րդ տարին կլինի 250-ը (մ. թ. ա.)։

Բ. Եվսեբիոսը 4 անգամ հիշատակում է Սելևկյան առաջին երեք գահակալների թագավորության այսպիսի տարեքանակներ՝ Սելևկոս Նիկատոր 32, Ան-

---

3 Խորենացու, Ասողիկի, նաև Խորենացուն հետևող մյուս հեղինակների վկայություններով 263 թ. (մ. թ. ա)՝ իբրև Արշակունիների անկախացման տարեթիվ, ընդունելու ենք պայմանականորեն, քանի որ նրանք, հատկապես Խորենացին ու Ասողիկը, նկատի են ունեցել 262 թ. (մ. թ. ա.)։

4 Տե՛ս «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1905, օգոստոս, հոկտեմբեր։

5 Եվսեբ. Կեսարացի, Ժամանակագրութիւն, մասն Բ, Վենետիկ, 1818, էջ 232։

6 Նույն տեղում, մասն Ա, էջ 345։

տիոքոս Սոտեր 19, Անտիոքոս Թեոս 15[7] և սրան զուգահեռ մի քանի անգամ վկայում, որ Սելևկոս Նիկատորը թագավորել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 12 տարի հետո կամ ուղղակի ցույց տալիս 311 թ. (մ. թ. ա.)[8]։ Կասկածից վեր է դարձյալ, որ այս տեղեկություններով էլ Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին 250 թ. է, քանի որ, ըստ Եվսեբիոսի, Սելևկոս Նիկատորի թագավորության առաջին տարվանից (311 թ. մ. թ. ա.) մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին կազմում է ուղիղ 61-ամյա ժամանակաշրջան[9]։

Հավատալով Եվսեբիոսին և համոզված լինելով, որ Խորենացին անպայման ընդօրինակել է նրան, ենթադրվել է, որ Խորենացու մոտ նույնպես Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին պետք է համընկնի 250 թ. (մ. թ. ա.), որ Խորենացին էլ, ինչպես Եվսեբիոսը և բազմաթիվ ուրիշ հեղինակներ, Սելևկոս Նիկատորի թագավորության սկիզբը պետք է ընդունած լինի ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից, այլ Սելևկյան տոմարի հաստատման տարեթվից (311 թ. մ. թ. ա.)[10]։

Եթե Խորենացուն հարկադրաբար թելադրված այս պահանջով մոտավորապես լուծվում էր նրա ու Եվսեբիոսի միջև նկատվող տարբերությունը և Խորենացին հարմարեցվում էր Եվսեբիոսին, ապա ստեղծվում էր մի նոր ներքին հակասություն Խորենացու հիշատակած երկու վկայությունների միջև, քանի որ այս մոտեցմամբ Խորենացու մոտ մի դեպքում ստացվում էր 263 թ. (մ. թ. ա.), իսկ մյուս դեպքում՝ 250 կամ 251-ը (մ. թ. ա.)։

Հարկադրաբար ստեղծված այս հակասության լուծման փորձ կատարեց ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը, որի ենթադրությամբ Խորենացու «Յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի» միտքը չպետք էր հասկանալ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ նրա մահվանից 12 տարի անց, այն է՝ 312 թ. (մ. թ. ա)[11]։ Սեն-Մարտենի այս առաջարկը ոչ միայն ընդունելի համարվեց և լռելյայն ընդունվում է առ այսօր, այլև եղան բանասերներ էլ, որոնք ընդունելով այն, աշխատեցին ավելի հիմնավորել։ Մկրտիչ Էմինը Ասողիկի «Տիեզերական պատմության» 1864 թ. Մոսկվայի ռուսերեն հրատարակության 8-րդ ծանոթությունում (էջ 235) առաջարկում էր Խորենացու վկայության մեջ Ալեքսանդր անվան տակ հասկանալ ոչ թե հին աշխարհի հռչակավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ նրա մանկահասակ որդի Ալեքսանդրին, որի մահը դրվում էր 311 թ. (մ. թ. ա)։ Քերովբե Պատկանյանը, համակարծիք լինելով Սեն-Մարտենին և այլոց, միաժամանակ ենթադրում էր, որ Խորենացին թերևս չի էլ ճանաչել Ալեքսանդր Մակեդոնացուն։ Իր «Նյութեր Հայկական բառարանի համար» ուսումնասիրության երկրորդ տետրի հավելվածում, ուր անդրադառնում է Արշա-

7 Նույն տեղում, մասն Ա, էջ 344—345, 357, մասն Բ, էջ 34—35, 226—232։

8 Նույն տեղում, մասն Ա, էջ 344—345, մասն Բ, էջ 34—35 և այլ տեղեր։

9 Եվսեբիոսը իր «Ժամանակագրության» I մասում (էջ 299) Արշակունիների անկախացումը դրել է նաև 133-րդ օլիմպիադին (248—244 թթ. մ. թ. ա.)։ Այս տեղեկությունը քննարկման հարց չի դառնալու, քանի որ Խորենացու ժամանակագրությունը բացատրվել է 250 թ. (մ. թ. ա.)։

10 Ինչպես այս, այնպես էլ մնացած բոլոր դեպքերում Սելևկյան տոմարի հիմնադրման տարեթիվ ենք ընդունելու 311-ը (մ. թ. ա.), նկատի ունենալով, որ հեղինակների մեծ մասը և հատկապես Եվս. Կեսարացին առաջնորդվել է այս թվականով։

11 Տե՛ս „История Армении М. Хоренского", Москва, 1858, прилож. 137, էջ 279; նաև՝ Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1884, ծանոթ. 39, էջ 313—314։

կունիների անկախացման վերաբերյալ Խորենացու վկայություններին, առանց որևէ հիմքի գրում է. «Այս հատվածներից պարզ է, որ Խորենացին առհասարակ նկատի չի ունեցել Ալեքսանդր Մեծի մահվան թվականը, հնարավոր է չի էլ իմացել նրան»[12]։

Այս ենթադրությունները, որոնց բուն նպատակը, ինչպես երևում է, Խորենացուն ըստ ամենայնի Եվսեբիոսի հետ հաշտեցնելն էր, փաստական տվյալներով բոլորովին չհիմնավորված սոսկ կռահումներ էին։ Համոզվելու համար անհրաժեշտ է վերադառնալ Սեն-Մարտենի ենթադրությանը և պարզել, հավանակա՞ն է արդյոք, որ Խորենացին գրեր «յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի» և այսքան բացահայտ վկայությամբ հասկանար ոչ թե Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ նկատի ուներ ինչ-որ 12 տարի էլ նոր, ապա 60 տարի։ Մեր կարծիքով այս ենթադրությունը հեռու է հավանական լինելուց։ Եթե Խորենացին հիշյալ 60 տարվանից դատ նկատի ուներ ինչ-որ 12 տարի էլ, բոլորովին անհրաժեշտություն չկար, որ նա դիմեր այնպիսի հանելուկային հաշվի, ինչպիսին առաջարկվում է նրան այս ենթադրությամբ։ Այլ, փոխարեն գրելու «յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի», պարզապես կգրել՝ «Յետ յեթանասուներկու ամի մահուանն Ալեքսանդրի», որն ավելի հասկանալի կդառնար, մի բան, որ Խորենացու բուն նպատակն էր։

Մյուս կողմից, եթե Խորենացին նկատի չունենար Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը, այլ ցանկանար Արշակունիների անկախացման տարեթիվը բացատրել Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 12 տարի հետո կատարված որևէ իրադարձությամբ, չէր հիշատակի Ալեքսանդր Մակեդոնացուն և ոչ էլ մեր ուշադրությունը կհրավիրեր նրա մահվան թվականի վրա։ Առավել անհավանականը Մկրտիչ Էմինի ենթադրությունն է։ Իրրև այս ենթադրությունը հերքող ապացույց բավական է թեկուզ կրկին անգամ ուշադրություն բևեռել Խորենացու համապատասխան վկայություններին և տեսնել, թե ո՞ր Ալեքսանդրին է վերաբերում նրա խոսքը։

«Յետ տիրելոյն ամենայն տիեզերաց Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, որդւոյ Փիլիպպեայ և Ոլոմպիադայ, որ էր քսան և չորրորդ յԱքիլղայ, բազմաց տալով զտէրութիւնն կտակաւ, զի ամենցուն իշխանութիւն՝ Մակեդոնացւոցն անուանեսցի՝ ընդ մեռանի»[13]։ Այսքան պերճախոս վկայություններից հետո ոչ միայն անհավանական, այլև անհնար է նման ենթադրության հանգելը։ Ինչպես տեսնում ենք, Խորենացին իր հիշատակած Ալեքսանդրին այնպիսի տարբերանշող հատկանիշներ է վերագրել տիեզերակալ, Փիլիպպոսի և Օլիմպիադայի որդի, 24-րդն Ամիլլեսից, որոնք հնարավոր չի հեշտությամբ վերագրել ո՛չ Ալեքսանդրի մանկահասակ որդուն և ո՛չ էլ երբևէ գոյություն ունեցած որևէ Ալեքսանդրի։ Ո՞ւմ չի հայտնի, որ Տիեզերակալը, Փիլիպոսի և Օլիմպիադայի որդին և Աքիլլեսից 24-րդը հենց ինքը Ալեքսանդր Մակեդոնացին էր։ Մի՞թե այնքան անտեղյակ էր Խորենացին պատմական դեպքերին ու դեմքերին, որ Ալեքսանդրի մանկահասակ որդուն վերագրեր տիեզերակալի փառքը, կամ էլ նրան համարեր Փիլիպոսի որդին ու 24-րդն Աքիլլեսից։ Ավելին, եթե Խորենացին նկատի ուներ Ալեքսանդր Փորբին, ինչպես ցանկացել է Մկրտիչ Էմինը, ապա անհրաժեշտություն չկար փոխելու նրա հայրանունը և փոխարեն որդի Փիլիպոսի,

[12] К. Патканов, Материалы для армянского словаря, вып. II, СПБ, 1884, էջ 51։

[13] Խորենացի, Հայոց պատմութիւն, էջ 102։

կգրեր որդի Ալեքսանդրի։ Էլ չենք խոսում այն մասին, որ Խորենացին իր ժամանակագրական համակարգի մեկնաբանման ապագա բախտը չէր կապելու մի այնպիսի անվան հետ, ինչպիսին էր Ալեքսանդր Մակեդոնացու որդին, որը ոչ մի գործով հայտնի չէր, բացի Մակեդոնացու որդին լինելուց։

Հավանականությունից հեռու է նաև Պատկանյանի ենթադրությունը։ Չենք կամենում այս ենթադրությունը հերքող նոր ապացույցներ վկայակոչել, նկատի ունենալով, որ Սեն-Մարտենի և Մկրտիչ Էմինի ենթադրությունների առթիվ ասվածները միաժամանակ բավարար ապացույց են ընդդեմ այս ենթադրության։ Վերևում տեսանք, որ Խորենացին ոչ թե չի ճանաչել, այլ շատ լավ է ճանաչել Ալեքսանդր Մակեդոնացուն։ Անտեսել Խորենացու այդքան բացահայտ վկայությունները և դրանց առկայությամբ հանդերձ կասկածի ենթարկել նրա գիտելիքները, ոչ միայն անհավանական, այլև անարդար է։

Այստեղ մեր նպատակն Արշակունիների անկախացման վերաբերյալ Խորենացու վկայությունների առթիվ եղած բոլոր ենթադրությունների քննարկումը չէ, մենք ցանկացանք անդրադառնալ նրանցից ակնառուներին, հատկապես Սեն-Մարտենի ենթադրությանը, որն ուղեցույց է ծառայել ուրիշ բազմաթիվ ուսումնասիրողների, և ցույց տալ, թե որքան կամայական է եղել Խորենացու այդքան արժեքավոր և ելակետային վկայությունների մեկնաբանումը։ Ավելացնենք միայն, որ հիշյալ տեսակետը պաշտպանող գիտնականները անգամ չեն նկատել, որ հակասություն են ստեղծում իրենց ենթադրություններում։ Ինչպե՞ս կարելի է մի կողմից Խորենացուն Եվսեբիոսին գիտակ ու հետևող համարել։ իսկ մյուս կողմից էլ պնդել, թե նա շփոթել է Ալեքսանդր Մակեդոնացուն կամ լավ չի իմացել նրա մահվան թվականը։ Չէ՞ որ Եվսեբիոսը, որի հետ այնքան ջերմեռանդությամբ կապվել է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգի բախտը, բազմիցս հիշատակել է Ալեքսանդր Մակեդոնացուն, չմոռանալով նաև նրա մահվան թվականը։ Հակառակ այս տեսակետի, Խորենացու վկայությունների ուշադիր քննությունից պարզ երևում է, որ նա ոչ միայն չի հետևել Եվսեբիոսին կամ այն հեղինակներին, որոնք Սելևկոս Նիկատորի 32-ամյա թագավորությունը հաշվել են 312 կամ 311 թ. (մ. թ. ա.), այլ որոշակիորեն տարբերվում է նրանցից։

Այս ենթադրությունը հաստատող ապացույց է Խորենացու երկրորդ վկայության «որպէս ասացաք» միտքը։ Ի՞նչը նկատի ունի հեղինակը «որպես ասացաք»-ով, եթե ոչ իր առաջին վկայությունը, հատկապես ցանկանալով մատնանշել այն, որ իր մոտ Սելևկոս Նիկատորի իշխանության 1-ին տարին Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականն է, հետևաբար իր հիշատակած Սելևկյան գահակալների վաթսուն տարին էլ պետք է հաշվել Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո։ Իհարկե, այս բանը երևում է նաև Խորենացու առաջին վկայությունից, սակայն համեմատաբար անորոշ, քան երկրորդ վկայության մեջ։ Եթե առաջին վկայության «զկնի որոյ (այն է՝ Ալեքսանդր Մակեդոնացուց) թագաւորեաց Բաբելովնի Սելևկոս» միտքը կարելի է հասկանալ ոչ միայն Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ ավելի ուշ, ասենք 311 կամ 312 թ. (մ. թ. ա.), ինչպես ենթադրվել է, ապա երկրորդ վկայությունը բացահայտ ցույց է տալիս, թե՝ երբվանի՞ց հաշվել Սելևկոս Նիկատորի 1-ին տարին և քանի՞ տարի հաշվել մինչև Արշակունիների անկախացումը։ «Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի»,— ահա Խորենացու պատասխանը։

Խորենացու «Որպէս ասացաք» միտքը ունի նաև մեկ այլ ուշագրավ նշանակություն։ Եթե նա իր երկրորդ վկայությունը սկսեր այսպես՝ «Յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի», առանց «որպես ասացաք»-ի, ապա թերևս հնարավոր լիներ երկրորդ վկայության Ալեքսանդրին համարել ոչ թե Մակեդոնացի տիեզերակալին, այլ նրա Ալեքսանդր որդուն, ինչպես փորձել են։ Սակայն Խորենացու երկրորդ վկայության Ալեքսանդրը, որը սոսկ Ալեքսանդր է առանց տարբերանշանների, «որպէս ասացաք»-ով այնպես է նույնացվում առաջին վկայության Ալեքսանդրին, որ նման ենթադրության համար որևէ հնարան չի մնում։ Եվ միայն այն փաստը, որ Խորենացու ավանդած Սելևկյան առաջին դահակալների թագավորության տարեքանակները նման են Եվսեբիոսի տեղեկություններին, որ երկուսի մոտ էլ Արշակունիների անկախացման տարեթիվ է համարված Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին և 311 թ. (մ. թ. ա.) ընդունված է որպես Սելևկյան տոմարի ու Սելևկոս Նիկատորի թագավորության սկզբնատարի, դեռևս չի կարող հիմք ծառայել, որ Խորենացուն առաջնորդենք Եվսեբիոս Կեսարացու հետքերով, որովհետև Խորենացու երկրորդ վկայությունը հիմնավորված է առավել անկասկածելի տարեթվով և թույլ չի տալիս Խորենացուն հեշտությամբ Եվսեբիոսին հետևող համարել։ Ավելին, մենք դեռևս առիթ կունենանք համոզվելու, որ Խորենացին բավարար փաստեր է ունեցել Սելևկոս Նիկատորի 32-ամյա թագավորությունը հաշվել ոչ թե 311, այլ 323 թ. (մ. թ. ա.)։

Արշակունիների անկախացման տարեթվի հարցում Եվսեբիոսից տարբերվելու ձգտումն առանձնահատուկ է ոչ միայն Խորենացուն։ Այն յուրահատուկ է նաև նրան հետևող հայ հետագա հեղինակներին։ Այս բանը մի կողմից ապացույց է, որ Խորենացուն նույնությամբ վերակրկնող հեղինակները գիտակցաբար են հետևել նրան, մյուս կողմից էլ հաստատում է, որ Խորենացին 60-ամյա միջանկյալ ժամանակաշրջանը իրոք հաշվել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականից։

Եվսեբիոսից այս հարցում տարբերություն գտնում ենք հատկապես Ասողիկի մոտ։ Չնայած բազմաթիվ ընդօրինակություններին, որը չի ժխտում ինքը Ասողիկը, որ մասամբ էլ մատնանշված է նախորդ ուսումնասիրություններում (Ասողիկի «Տիեզերական պատմության» 1885 թ. հրատարակության Մալխասյանի, ինչպես նաև Մկրտիչ Էմինի 1864 թ. Մոսկվայի ռուսերեն հրատարակության ծանոթություններում), միաժամանակ նկատելի է, որ նա չի հետևել Եվսեբիոսի ժամանակագրական որոշ տեղեկություններին, հատկապես Արշակունիների ժամանակագրությանը առնչվող տեղեկություններին և այս հարցում հարազատ է մնացել Խորենացուն։ Նկատի ունենալով, որ այս ենթադրությունը հաստատող որոշ փաստեր քննարկվելու են մյուս հարցերի կապակցությամբ, այստեղ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել միայն Սելևկյան առաջին երեք դահակալների մասին Եվսեբիոսի և Ասողիկի ավանդած տեղեկությունները, որոնց հետ, ինչպես տեսանք, անմիջապես կապված է Արշակունիների անկախացման տարեթվի անչափ կարևոր հարցը։

Այս առթիվ Եվսեբիոսի մոտ կարդում ենք. «Իսկ Սելևկոս իբրև չոգաւ ի մէջ բարբարոսաց և յաղթեաց, թագաւորէր. և անտի կոչէր Նիկանովր՝ որ է յաղթող. և ունէր զթագաւորութիւնն ամս ԼԲ(32) սկսեալ ի Ճ-որդէ և յեօթնեւ Փ. Երորդէ ոլոմպիադին առաջնոյ ամին, և ձգեալ մինչև ց Ճ-որդ Ի-երորդ չոր-

ռորդն՝ ամին չորրորդի. և կեայր ընդ ամեն ամս ՀԵ(75). և խաբ գործեալ նմա ի բարեկամէ Պտղոմէի՝ որ Կերաւնոս, մեռանէր.

Զսա պայազատէ սորին որդի Անտիոքոս յապամայ՝ որ յեալ ի Պարսկաստանէ. և կոչեցաւ Սովտէր՝ որ է փրկիչ։ Հարիւրորդի Ի-երորդի իններորդի ողոմպիադին՝ յամին առաջնում վախճանեաւ կեցեալ ընդ ամենայն ԿԴ(64) և տիրեալ ամս ԺԹ (19) ի Ճ-որդէ Ի-երորդէ հինգերորդէ ողոմպիադին առաջնոյ ամին՝ մինչև ցՌ-որդ Ի-երորդ իններորդ ողոմպիադն երրորդ ամին[14]։

Եղեն նորա որդիք ի Ստրատոնիկեայ դստերէն Դէմէտրի. առու Անտիոքոս. և դստերք Ստրատոնիկ և Ապամ. յորոց զԱպամն տարաւ արար կին. և զՍտրատոնիկն՝ Դէմէտրիոս Մակեդոնացւոց թագաւոր։ *Ի վախճանել ճառելոյն Անտիոքայ Սովտէրի, յաջորդէ զիշխանութիւնն Անտիոքոս, որոյ կոչեցաւ անուն յորջորջանաց Թեոս.* սկսեալ ի Ճ-որդէ Ի-երորդէ իններորդէ ողոմպիադէն չորրորդի ամին, և ձգեալ ամս *ԺԹ (19)*[15] *խօթացաւ. և վախճանեալ յԵփեսոս Ճ-որդի երեսներորդի Ե երորդի ողոմպիադին յերրորդ ամին*[16], *կեցեալ ընդ ամենայն ամս Խ(40)*[17]։

Ստ. Տարոնացին (Ասողիկ) գրում է. «Իսկ Պարսք և Պարթևք և ամենայն Արևելեայք...[18] *ոչ կամէին մտանել ընդ ծառայութեամբ Մակեդոնացւոց։ Բայց Սելևկոս զորօք բազմօք չոգաւ ի մէջ նոցա, ետ պատերազմունս և յաղթեաց. և անտի կոչէր Նիկանովր, որ է յաղթող՝ և թագաւորէր ամս լա(31) և կեայր ընդ ամենայն՝ ամս ՀԵ(75)։*

---

14 Ինչպես տեսնում ենք, Եվսեբիոսի այս հատվածում Անտիոքոս Սոտերի թագավորության վերջին տարվա համար կա երկու տեղեկություն։ Մի դեպքում մատնանշված է 129-րդ օլիմպիադի 1-ին տարին, այն է՝ 263 թ. (մ.թ.ա.), մյուս դեպքում նույն օլիմպիադի 3-րդ տարին՝ 261 թ. (մ. թ. ա.)։ Եվսեբիոսի վկայություններով այս երկուսից ճիշտը վերջինն է։ Այսպես՝ ա) ըստ Եվսեբիոսի, Սելևկոս Նիկատորը թագավորել է 32 տարի, սկսած 117-րդ օլիմպիադի 1-ին տարվանից (311 թ. մ. թ. ա.), մինչև 124-րդի 4-րդ տարին (280 թ. մ. թ. ա.)։ Ինչպես երևում է, Սելևկոսի թագավորության տարեթվերը փոփոխված չեն, ուստի փոփոխված չի նաև նրա հաջորդ Անտիոքոս Սոտերի 1-ին տարին, որը դրված է 125-րդի 1-ին տարում (279 թ. մ. թ. ա.)։ Եթե այդպես է և նա թագավորել է 19 տարի, որն, իրոք, Անտիոքոս Սոտերի թագավորության ստույգ տևողությունն է, հետևաբար վերջին տարին լինելու է 261 թ. (մ. թ. ա.) և ոչ 263-ը (մ. թ. ա.), այլ կերպ՝ 129-րդ օլիմպիադի երրորդ տարին և ոչ առաջինը։ բ) Մյուս կողմից, Անտիոքոս Սոտերին հաջորդել է Անտիոքոս Թեոսը 129-րդի 4-րդ տարում (260 թ. մ. թ. ա.)։ Դարձյալ ապացույց, որ Անտիոքոս Սոտերի վերջին տարին եղել է 129-րդի երրորդ տարին։

15 Անտիոքոս Թեոսի համար 19-ամյա թագավորությունը այստեղ հետագա փոփոխության արդյունք է։ Պետք է լինի 15 տարի, որի մասին նույն աշխատությունում երեք անգամ վկայում է Եվսեբիոսը (տե՛ս մասն Ա, էջ 357, մասն Բ, էջ 35, 232)։ Նույն տարեքանակը, ինչպես կտեսնենք, հաստատում է Ասողիկը, վկայում են նաև ուրիշ հեղինակներ։

16 Անտիոքոս Թեոսի վերջին տարվա մասին այս տեղեկությունը պետք է լինի ոչ թե «Ճորդի երեսներորդի Ե երորդի ողոմպիադին յերրորդ ամին», որը կլինի 237 թ. (մ. թ. ա.), այլ «Ճ՝որդի երեսներորդի երրորդի ողոմպիադին յերրորդ ամին» (245 թ. մ. թ. ա.)։ Նկատի ունենք հետևյալը՝ ա) Եվսեբիոսի հաջորդ վկայություններով նրա 1-ին տարին դրվեց 260 թ. և տրվեց 15-ամյա թագավորության ժամանակաշրջան, հետևաբար վերջին տարին կլինի 245 թ. (մ. թ. ա). բ) Անտիոքոս Թեոսի հաջորդ Սելևկոս Կալինիկոսը, համաձայն նույն հեղինակի (տե՛ս մասն Ա, էջ 346) թագավորել է «յերրորդ ամէ Ճորդի երեսներորդի երրորդի ողոմպիադին», որը դարձյալ 245 թ. է (մ. թ. ա.)։ Այս սխալի պատճառը ընդգծված «երրորդ» բառի կրկնակ «ե»-ստանալն է՝ «Ե՝երրորդ», որի հետևանքով փոխարեն հասկացվելու 133-րդ օլիմպիադի 3-րդ, հասկացվում է 135-րդի 3-րդ տարին։

17 Եվսեբ. Կեսարացի. Ժամանակագրութիւն, մասն Ա, էջ 344—345։

18 Ասողիկի մոտ այստեղ թվարկված են Եփրատից արևելք ընկած երկրները։

Զսա պայազատէր սորին որդի Անտիոքոս, որ կոչեցաւն Սովտէր՝ յԱպամայ, որ ելեալ ի Պարսկաստանէ. կեցեալ ամս ԿԴ (64) և թագաւորեալ ամս ԺԹ (19)։

Յետ սորա յաջորդէ զիշխանութիւնն Անտիոքոս, որ կոչեցաւ Թէոս՝ տիրեալ ամս ԺԵ (15)։

Եւ նոև ի ԺԱ ամին սորա և ի Կ (60) ամի զկնի վախճանին Աղեքսանդրի ապստամբեցին Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոց. և թագաւորէ ի վերայ նոցա Արշակ Քաջ ի Բահլ շահաստանի յերկիրն Քուշանաց...»[19]։

Կասկածից վեր է, որ Ասողիկի այս վկայության առաջին մասի տեղեկությունները, բացի վերջին պարբերությունից, որը նույնությամբ ընդօրինակված է Խորենացուց, ամբողջովին ծաղկաքաղ են արված Եվսեբիոսի վկայակոչված հատվածից։ Բառացի նմանություններով հանդերձ, որոնք միաժամանակ ապացույց են Եվսեբիոսից Ասողիկի ընդօրինակելուն, վերջինիս մոտ առկա է ինչ-որ կանխամտածված մոտեցում Եվսեբիոսի ժամանակագրական հաշվումների նկատմամբ։ Ինչպես տեսնում ենք, Եվսեբիոսի մոտ հիշատակված են ոչ միայն Սելևկյան արքաների թագավորության տարեքանակները, այլև անչափ որոշակի օլիմպիական հաշվումներով ուրվագծված են նրանց գահակալության ժամանակաշրջանները, որոնք բացակայում են Ասողիկի մոտ։ Այսպես, Սելևկոս Նիկատոր՝ 311—280, Անտիոքոս Սոտեր՝ 279—261, Անտիոքոս Թեոս՝ 260—245։

Արդ, քննարկվող հարցի համար անչափ կարևոր է, թե ինչո՞ւ Ասողիկը այսքան անտարբեր է Եվսեբիոսի օլիմպիական հաշվումների նկատմամբ և անտեսել է նրա տարեթվեր մատնանշող տեղեկությունները։

Մեր կարծիքով այս անտարբերության պատճառը մեկն է։ Այն, որ Ասողիկը լուրջ ուսումնասիրություններով ժամանակին կռահել է Եվսեբիոսի և Խորենացու միջև նկատվող տարբերությունը՝ Արշակունիների անկախացման տարեթվի հարցի շուրջ և նախընտրել է հետևել Խորենացուն։ Այս է պատճառը նաև, որ Ասողիկն Արշակունիների անկախացումն ընդունել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո և անտեսել է Եվսեբիոսին, որի մոտ Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին շատ որոշակի համընկնում է 250 թ. (մ. թ. ա.)։ Սրանով պետք է բացատրել, որ Սելևկոս Նիկատորի համար նա ընդունել է ոչ թե 32 տարվա թագավորության ժամանակաշրջան, ինչպես Եվսեբիոսի մոտ է, այլ 31 տարվա, ինչպես Խորենացու, որպեսզի մինչև վերջ հարազատ մնա Խորենացուն և ուղիղ 60 տարի լինի թե՛ Ալեքսանդրի մահվանից մինչև Արշակունիների անկախացումը և թե՛ Սելևկոս Նիկատորի առաջին տարվանից մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին։ Վերջապես, այս պետք է համարել պատճառը, որ Ասողիկը ցանկանալով հիմնավորել իր տեսակետը, անհրաժեշտ է համարել կրկին անգամ հիշատակել Ալեքսանդր Մակեդոնացուն։ «Որպէս ասացաք,— դարձյալ գրում է Ասողիկը,— յետ Կ (60) ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ Քաջ ի քաղաքին որ կոչի Բահլ Առաւաւտին յերկիրն Քուշանաց»[20]։

Մի կողմից Եվսեբիոսի ավանդած տարեթվերի անտեսումը, մյուս կողմից էլ Արշակունիների անկախացման տարեթվի որոշման համար Ալեքսանդր Մա-

---

19 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 29։

20 Ասողիկ, էջ 32։

կեդոնացու մահվան թվականին նախապատվություն տալը մեզ բերում է այն համոզման, որ Ասողիկի մոտ էլ, ինչպես Խորենացու, Սելևկյան հարստության սկիզբ պետք է համարել 323 թ. (մ. թ. ա.), հետևաբար Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին էլ 263 թ. (մ. թ. ա.)։ Այլապես, անհնար է մտածելն անգամ, որ Եվսեբիոսի «Ժամանակագրության» և օլիմպիական հաշվումներին այնքան քաջատեղյակ մի հեղինակ, ինչպիսին էր Ասողիկը, չկարողանար որոշել, թե Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին Եվսեբիոսի մոտ 250 թ. է (մ. թ. ա.) և այսքան բացահայտ վկայությամբ կարիք զգար Արշակունիների անկախացումը ընդունել Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո ու դրանով հակասություն ստեղծեր իր վկայություններում։ Այս մոտեցմամբ արդեն որոշակի է դառնում նաև Արշակունիների սկզբնատարվան վերաբերող Ասողիկի երրորդ տեղեկությունը։ Բանն այն է, որ Ասողիկը վերոհիշյալ տեղեկություններից զատ ունի նաև այսպիսի վկայություն. «...Յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հռոմայ... դադարէ թագաւորութիւնն Պարթևաց յազգէն Պահլաւկաց, սկսեալ յԼ (30) ամի թագաւորութեան Փիլադելփոս Պտղոմեսի...»[21]։

Եթե նույնությամբ հետևելու լինենք Ասողիկի այս վկայության, Արշակունիների անկախացման տարեթիվ պետք է համարել 254, 253 կամ 252 թ. (մ. թ. ա.), քանի որ ըստ Եվսեբիոսի[22] Պտղոմեոս Լագոսի առաջին տարվանից (323, 322 կամ 321 թ. մ. թ. ա.) մինչև նույն հարստության երկրորդ գահակալ Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 30-րդը կազմում է 69 տարի։ Այսպես՝ Պտղոմեոս Լագոս 40[23]+Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 29-ը տարին=69։ Պարզ երևում է, որ Ասողիկն իր այս տեղեկությունով հակասում է ոչ միայն Խորենացուն ու Եվսեբիոսին, այլև, որն առավել անսպասելին է, իր իսկ նախորդ վկայություններին։ Ուստի, անկասկածելի է, որ Ասողիկի բնագրի վկայությունը ենթարկվել է փոփոխության։ Սակայն կարևոր է, թե ի՞նչ տեղեկություն է եղել բնագրում։ Այս հարցին պատասխանել է Մալխասյանը Ասողիկի «Տիեզերական պատմության» 1885 թ. Պետերբուրգի հրատարակության 39-րդ ծանոթությունում։ Մալխասյանի ենթադրությամբ, նախապես եղել է ոչ թե Պտղոմեոս Ֆիլադելֆոսի թագավորության Լ (30)-րդ, այլ ԼԴ (34)-րդ տարում։ Պարզ ասած, ըստ Մալխասյանի Ասողիկը իր տեղեկությունը քաղել է անմիջապես Եվսեբիոսից կամ էլ «...ի ձեռն Մ. Խորենացւոյ, և զի Ասողիկ վասն սկզբանն Արշակունեաց չտայ թուական ինչ նոր յանձնէ»[24]։ Մալխասյանին այս ենթադրության առաջնորդողը դարձյալ միևնույն համընդհանուր ճանաչում գտած տեսակետն էր, որով Խորենացին Արշակունիների սկզբնատարվա հարցում հետևող էր համարվում Եվսեբիոսին և հավասարության նշան էր գրվում նրանց վկայությունների միջև։

Սակայն այժմ, երբ մասամբ հայտնի է Խորենացու և Ասողիկի վերաբերմունքը Եվսեբիոսի վկայությունների նկատմամբ, երբ Արշակունիների անկախացման առթիվ նրանց մատնանշած թվականը հնարավոր չի համատեղել Եվսեբիոսի հետ, բնական է, որ Ասողիկի այս տեղեկությունն էլ պետք է այլ ձևով մեկնաբանել։

---

21 Ասողիկ, էջ 31։

22 Եվսեբ. Կեսարացի, Ժամանակագրութիւն, մասն Ա, էջ 191, 237, 251, մասն Բ, էջ 33, 224։

23 Նույն տեղում, մասն Ա, էջ 191, 237, 251, մասն Բ, էջ 33, 224, 228։

24 Ասողիկ, էջ 314։

Ի տարբերություն Մալխասյանի ենթադրում ենք, որ Ասողիկի մոտ նախապես եղել է ոչ թե «Լ» (30) ամի, ինչպես ունենք արդի օրինակում, կամ՝ «ԼԴ» (34) ամի, ինչպես Եվսեբիոսի մոտ էր, այլ՝ «Ի» (20) ամի թագաւորութեան Փիլադելփոսի Պտղոմեոսի»։

Այս ենթադրությամբ արդեն Ասողիկի մոտ կունենանք Արշակունիների անկախացման միևնույն տարեթիվը մատնանշող երեք տեղեկություն՝

ա) Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո (323—60=263 թ. մ. թ. ա.)։

բ) Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին, դարձյալ 263 թ. (մ. թ. ա.)՝ [323—(Սելևկոս Նիկատոր 31+Անտիոքոս Սոտեր 19+Անտիոքոս Թեոսի 10-ը=60)]։

գ) Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 20-րդ՝ 264, 263 կամ 262 թ. (մ. թ. ա.)՝ [322, 322 կամ 321 (Պտղոմեոս Լագոս 40+Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 19-ը՝=59)]։

Մեր կարծիքով, Ասողիկի երրորդ տեղեկությունը նույնպես, որն այս տեսանկյունով համահնչուն է նրա նախորդ վկայություններին, գիտակցաբար Խորենացու ժամանակագրությանը հետևելու արդյունք է։ Այլապես անբացատրելի է մնում, թե ինչո՞ւ Ասողիկը, այն էլ երկու անգամ, Արշակունիների անկախացումը պետք է ընդուներ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո և հանկարծ սրան զուգահեռ հիշատակեր Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 34-րդ տարին։ Հնարավո՞ր է արդյոք մտածել, որ Ասողիկը չի կռահել այս երկու վկայությունների միջև եղած հակասությունը կամ նա էլ, ինչպես ասվել է Խորենացու մասին, նկատի է ունեցել Ալեքսանդրը Փոքրին։ Այսպես մտածելն անգամ վեր է երևակայությունից։ Եթե Ասողիկը Եվսեբիոսի «Ժամանակագրություն»-ից բացի ուրիշ ոչինչ կարդացած չլիներ (իսկ Եվսեբիոսին քաջատեղյակ լինելը անկասկածելի է և դժվար թե դրան գեթ մեկը առարկի), էլի բավական էր, որ նա հստակ պատկերացում ունենար թե՛ Ալեքսանդր Մակեդոնացու, թե՛ Պտղոմեյան գահակալների և թե՛ նրանց ժամանակագրության վերաբերյալ[25]։ Ասողիկի վերոհիշյալ վկայությունների վերաբերյալ մեր ենթադրությունները հաստատվում են նաև այն բանով, որ նրա մոտ էլ, ինչպես Խորենացու մոտ, Վաղարշակի թագավորության սկզբնատարի է համարված միևնույն թվականը։ Այս հարցին մենք դեռևս առիթ կունենանք անդրադառնալու։

Խորենացուց և Ասողիկից զատ Եվսեբիոսից զանազանվում են նաև այն հեղինակները, որոնք Արշակունիների անկախացումը կապել են միայն Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականի հետ։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշատակել որոշակի վկայություններ թողած բոլոր հեղինակներին։

Թովմա Արծրունի. «...Յետ Կ(60) ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ...»[26]։

Վարդան Բարձրաբերդցի. «Քաջն Արշակ, որ զկնի վաթսուն ամաց մահուանն Աղէքսանդրի ապաստամբեալ ի Մակեդոնացւոյ՝ թագաւորեաց յերկիրն Քուշանաց...»[27]։

---

25 Ասողիկի երրորդ վկայությունը նույնությամբ գտնում ենք Սերեոսին վերագրված աշխատության 3-րդ գլխում։ Սակայն նկատի ունենալով, որ այն ընդօրինակված է Ստ. Տարոնացու (Ասողիկ) աշխատությունից, ինչպես վկայում է հատվածի հեղինակը նույն գլխի վերնագրում և և նոր բան չի տալիս, թողնում ենք նրա քննարկումը։ Ավելացնենք միայն, որ հեղինակը, հավանական է, օգտվել է Ասողիկի արդեն փոխված օրինակից, քանի որ նրա մոտ էլ հիշատակված է Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 30-րդ տարին։

26 Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1913, էջ 82։

27 Վ. Բարձրաբերդցի, Պատմութիւն տիեզերաց, Մոսկվա, 1861, էջ 43։

Անանուն ժամանակագիր՝ XIII դար. «...Քաջն Արշակ յետ Կ (60) ամաց մահուանն Աղեկսանդրի ապստամբել ի Մակեդոնացոցն, թագաւորեաց յերկիրն Քուշանայ ի Բահլ շահաստան...»[28]։

Անանուն ժամանակագիր՝ XVII դար. «Նախ և առաջին Արշակ, վեհ թագաւորն Հայոց[29], յետ Կ (60) ամաց մահուանն Աղէքսանդրի, յազգէ Պարթևաց, յորմէ կոչեցան Արշակունիք»[30]։

Վկայակոչված հատվածներից երևում է, որ հիշատակված հեղինակները, հատկապես նկատի ունենք Թովմա Արծրունուն և Վարդան Բարձրաբերդցուն, հետագա թյուրիմացություններից խուսափելու նպատակով, անտեսել են Սելևկյաններին, նկատի ունենալով, որ Խորենացու երկու վկայություններն էլ էությամբ համազոր են և առավել հանրաճանաչը երկրորդ վկայությունն է։

Արշակունիների մասին Խորենացու տեղեկություններն այս ձևով հասկացել են նաև Դրասխանակերտցին, Ուխտանեսը, Մխիթար Անեցին և ուրիշներ։

Հ. Դրասխանակերտցի.— «Աղեքսանդր Փիլիպպեայ տիեզերակալեալ բազմաց՝ տայր տէրութիւն կտակաւ, զի ի վերայ ամենեցունց միապետեալ իւրն անուանեսցի իշխանութիւն։ Եւ սորա մեռեալ՝ Սելևկոս զկնի թագաւորէ Բաբիլոնի, զՊարթևս ևս ընդ իւրեաւ հնազանդեալ պատերազմաւ սաստկիւ։ Եւ սորա ևս մեռեալ՝ առնու զթագաւորութիւնն Անտիոքոս, որ և Սովտերն։ Եւ այսպէս սոքա թագաւորեալ ընդ փոքր և ընդ շատ իբրև ամս վաթսուն, ապա ապստամբին Պարթևք ի Մակեդոնացւոց»[31]։

Մ. Անեցի. «Սելևկիոս զկնի Աղեքսանդրի ԼԱ (31) ամ։ Անտիոքոս, որդի նորա՝ ԺԹ (19) ամ։ Անտիոքոս Թէոս՝ ԺԵ (15) ամ։ Ի սորա ԺԱ (11) ամին ապստամբեցին Պարթևք ի Մակեդոնացւոցն և թագաւորեաց նախ՝ Արշակ քաջ Պարթևաց...»[32]։ «Եւ որպէս ունիմ ասել, թագաւորէ Արշակ Քաջ, յետ Կ (60) ամի մահուանն Աղեքսանդրի, ի վերայ Պարթեւաց ի քաղաքին Բալխ Առաւատին, յերկիրն Քուշանաց, թափելով զամենայն արեւելեայսն»[33]։

Դավիթ Բաղիշեցի՝ XVII դար. «Սելևկոս... ամս ԼԱ(31)։ Զսա պայազատէ նորին որդի Անտիոքոս Սովտէրն կոչեցեալ, ամս ԺԹ(19)։ Յետոյ սորա Անտիոքոս Թիոս, ամս ԺԷ(17)։ Եի ի ԺԱ(11) ամին սորա, զկնի Կ(60) ամի վախճանի Աղէքսանդրի, ապստամբեցին Պարթևք և Պարսք ի ծառայութենէ Մակեդոնացւոց և եդին իւրեանց թագաւոր զԱրշակ»[34]։

Անառարկելի է, որ այս տեղեկությունները անծանոթ չեն նաև նախորդ ուսումնասիրողներին։ Սակայն հանրահայտ է միաժամանակ, որ նախորդ ուսումնասիրողները այս տեղեկությունները հիմնականում մատնել են անուշադրության, իրավամբ նկատի ունենալով, որ նրանք ընդօրինակված են Խորենացուց։

---

28 Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ., Երևան, 1956, էջ 121։

29 Հեղինակը այստեղ շփոթել է։ Արշակին Պարթևաց կամ Պարսից ասելու փոխարեն, ինչպես տեսնում ենք, «վեհ» կոչումով համարել է «թագաւորն Հայոց»։

30 Վ. Ա. Հակոբյան, նշվ. աշխ., հատ. Ա., Երևան, 1951, էջ 254։

31 Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 23—24։

32 Մխ. Անեցի, Պատմութիւն, ՍՊԲ, 1879, էջ 8։

33 Նույն տեղում, էջ 20։

34 Վ. Ա. Հակոբյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 307—308։

Արդ, կարևոր է, ո՞ր Խորենացուց։ Նրանի՞ց, որը հետևել է Եվսեբիոսի Սելևկյան ժամանակագրությանը և Ալեքսանդր Մակեդոնացուն հիշատակելիս նկատի է ունեցել Ալեքսանդր Փոքրին, ինչպես ենթադրվել է, թե՞ նրանից, որը Արշակունիների անկախացումը հաշվել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից և չի հետևել սելևկյան ընդունված ժամանակագրությանը։

Մեր կարծիքով միմիայն վերջինից։

Անկասկածելի է, որ վերոհիշյալ հեղինակները նկատի կունենային այն Ալեքսանդրին, որը ենթադրվում էր Խորենացու վկայություններից։ Պարզ ասած, տիեզերակալ Ալեքսանդր Մակեդոնացուն։ Եթե այդպես է, հետևաբար նրանք էլ, ինչպես Ասողիկի առիթով ասվեց, կարող էին կոահել, որ Արշակունիների անկախացումը Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հաշվելով կամ թե ակամա ցույց են տալիս 263 թ. (մ. թ. ա.). և չէին կարող չնկատել, որ դրանով հակասելու են Եվսեբիոսի մատնանշած թվականին (250 թ. մ. թ. ա.), քանի որ վկայակոչված հեղինակներից շատերը (Թ. Արծրունի, Հ. Դրասխանակերտցի, Մխ. Անեցի, Վ. Բարձրաբերդցի և ուրիշներ) քաջ ծանոթ էին Եվսեբիոսի «Ժամանակագրություն», բազմիցս վկայակոչում են նրան և նրանից քաղվածքներ կատարում իրենց աշխատություններում։

Ահա թե ինչու ենթադրում ենք, որ նրանք ոչ թե հենց այնպես, սոսկ ընդօրինակել են Խորենացուն (տեսակետ, որն առհասարակ անընդունելի է և կարելի է հերքել բազմաթիվ փաստերով), այլ դիտակցաբար հետևել են այն Խորենացուն, որի մոտ Արշակունիների անկախացումը ընդունված է Տիեզերակալ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո և դրանով իսկ տարբերվել Եվսեբիոսից։

Այս տարբերությունը առավել ակնհայտ է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում Եվսեբիոսին հետևող հեղինակների տեղեկություններին։

Միքայել Ասորին Արշակունիների անկախացման մասին հետևյալն է գրում. «Ի թուին Ասորոց Կա (62), և ի ճնազանդութեանն Յունաց յետ Եւրանասուն և Երկուց ամաց, խորհեցան կողմանքն Պարսից և արևելից, եթէ «Պատառեցան Մակեդոնացիքն ի միմեանց և տկարացան, և են հեռաւորք ի մէջ, և խռովութեամբ և չարչարանօք ունին զմեզ. զի՞նչ կայ մեր և նոցա, եկայք զիցուք մեզ մօտաւոր թագաւոր»։ Եւ թագաւորեցուցին իւրեանց զԱրշակ Քաջ...»[35]։ Միշտ է, Միք. Ասորին բառացի չի ընդօրինակել Եվսեբիոսին, սակայն սկզբունքորեն հետևել է նրան։ Այսպես, ըստ հեղինակի Արշակունիները անկախացել են Ասորաց 62 թ.։ Ասորաց թվականը, որը կոչվում է նաև Սելևկյան տոմար, կապված է Սելևկյան հարստության պաշտոնական հիմնադրման թվականի հետ (311 թ. մ. թ. ա.), որի մասին Միք. Ասորին հայտնում է. «Եւ սկիզբն թագաւորութեան սորա (Սելևկոսի,—Լ. Շ.), որ է զկնի երկոտասան ամի մահուանն Աղէքսանդրու, սկիզբն է թուականութեանն Ասորոց»[36]։ Այս տեղեկությամբ արդեն Միք. Ասորու առաջին վկայությունը անչափ որոշակի ցույց է տալիս 250 թ. (մ. թ. ա.), ինչպես Եվսեբիոսի մոտ էր։

Մի փոքր անորոշ է Միք. Ասորու երկրորդ վկայությունը։ Եթե 72 տարի հաշվենք Դարեհ III-ի գահընկեց լինելու տարեթվից (331 կամ 330 թ. մ. թ. ա.) կունենանք 259 կամ 258 թ. (մ. թ. ա.)։ Սակայն նկատի ունենալով, որ նույն

---

35 Միք. Ասորի. Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 76։

36 Նույն տեղում, էջ 73—74։

հեղինակը միևնույն վկայությամբ ինքն իրեն չէր հակասելու, ենթադրում ենք, որ Պարսկաստանի հունական հսլատակությունը նա հաշվել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո, երբ Սելևկոսը վերստին հպատակեցրեց նրանց։ Այս ենթադրությամբ արդեն Միք. Ասորու երկրորդ տեղեկությունը նույնպես Արշակունիների անկախացման տարեթիվ է մատնանշում 250 թ. (մ. թ. ա.) (322—72=250 թ. մ. թ. ա.)։

Արշակունիների սկզբնատարվա հարցում հայ հեղինակներից Եվսեբիոսին հետևող պետք է համարել Սամվել Անեցուն, Ներսես Պալիենցին, մասամբ էլ Մովսես Կաղանկատվացուն։

Սամվել Անեցին մեր ուշադրությունը երկու անգամ հրավիրում է մի փաստի վրա՝ հիշատակելով Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին։ «...Զկնի մահուանն Աղեքսանդրու,— գրում է նա,— իշխանութիւն նորա ի Դ (4) բաժանի... Արդ մի ի սոցանէ Սելևկոս, որ զկնի Աղեքսանդրի կալաւ զԲաբելոն, որ ընդ այլոց ազգաց և զՊարթևս հնազանդեցոյց մեծաւ պատերազմաւ, և վասն այնորիկ կոչեցաւ Նիկանովր։ Սա թագաւորեաց ամս ԼԱ(31)[37]։ Անտիոքոս Սոփտեր որդի սորա ամս ԺԹ (19)։ Անտիոքոս Թեոս ամս ԺԷ (37)[38]։ Ի սորա ԱԺ (11-րդ)-ան ամի ապստամբեն Պարթևք ի Մակեդոնացւոցն, որոց թագաւորեաց նախ Արշակ քաջ...»[39]։ Զմոռանանք նկատել նաև, որ Սամվել Անեցին, ի տարբերություն հայ մյուս հեղինակների, որոնց մոտ այս տեղեկությունը բացակայում է, Սելևկոս Նիկատորի թագավորության սկիզբը հաշվել է «...Յետ ԲԺ-ան ամի մահուանն Աղեքսանդրի»[40] և ընդհակառակը, չի հիշատակել Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո 60 տարին, ինչպես Խորենացու և մյուս հեղինակների մոտ էր։

Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից անցած 60 տարին չեն հիշատակել Ներսես Պալիենցը, որի վկայությունը Ս. Անեցու վկայությունների բառացի կրկնությունն է[41], ուստի անհրաժեշտ չենք համարում վկայակոչել, և Մովսես Կաղանկատվացին, որը Արշակունիների անկախացման համար որոշակի ընդունել է 252 թվականը (մ. թ. ա.)[42]։

Ինչպես երևում է, սահմանազատող տարբերություն է նկատվում ոչ միայն Եվսեբիոսի ու Խորենացու, այլև հեղինակների երկու խմբերի միջև։ Այն հեղինակները, որոնք հետևել են Եվսեբիոսին և Սելևկոս Նիկատորի թագավորության առաջին տարին հաշվել են 311 թվականից (Միք. Ասորի, Մովսես Կաղանկատվացի, Ս. Անեցի և ուրիշներ), խուսափել են Արշակունիների անկախացումը կապել Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականի հետ։ Իսկ այն հեղինակները, որոնք հետևել են Խորենացուն և Սելևկոսի

---

37 Ս. Անեցու մոտ (տե՛ս 1893 թ. հրատ., էջ 34) Սելևկոս Նիկատորի համար հանդիպում ենք նաև ԼԸ (38) տարի, փոխարեն ԼԱ (31)-ի։ Հավանական է, որ նրա բնագրում եղել է ԼԲ (32) ինչպես Եվսեբիոսի մոտ է, քանի որ Անեցին այս հարցում հարազատ է մնացել Եվսեբիոսին։

38 Անտիոքոս Թեոսի թագավորության 17 տարին Ս. Անեցու մոտ հետագա փոփոխության արդյունք է, նախապես եղել է 15 (ԺԵ), ինչպես մնացած համարյա բոլոր հեղինակների մոտ է, և ինչպես նրա աշխատության 34-րդ էջում։

39 Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 47, հմմտ. էջ 34։

40 Նույն տեղում, էջ 33—34։

41 Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 201։

42 Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 91։

թագավորության առաջին տարին հաշվել են Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականից, գլխավոր նպատակ են համարել զուգահեռ հիշատակել նաև Ալեքսանդրին (շատերն էլ միմիայն Ալեքսանդրին) և հիմնականում ուշադրություն են բևեռել նրա մահվան թվականի վրա։

Ինչպես այս, այնպես էլ շարադրության ընթացքում քննարկված փաստերը գալիս են վերջնականապես հաստատելու, որ Արշակունիների անկախացման տարեթվի առթիվ տեղեկություններ թողած հեղինակներին ոչ միայն չի կարելի հաշտեցնել և առաջնորդել Եվսեբիոսի հետքերով, այլ, ընդհակառակը, թելադրում են նրանց բաժանել երկու հիմնական խմբերի՝ Եվսեբիոսի ու Խորենացու հետևորդների և դիտել իբրև տարբեր տեսակետների կանգնած հեղինակներ։ Տեսակետներ, որոնք շատ հավանական է գոյություն են ունեցել մինչև Եվսեբիոս ու Խորենացի և պայմանավորված են Սելևկյան հարստության հիմնադրման տարեթվով. այն բանով, թե ո՞ր թվականն է ընդունվել Սելևկոս Նիկատորի թագավորության առաջին տարի՝ 311-ը, ինչպես Եվսեբիոսը, Ս. Աննեցին, Միք. Ասորին և ուրիշներն են համարում, թե 323-ը, ինչպես Խորենացու և նրան հետևող հեղինակների մոտ է։ Այս է բուն պատճառը, որ Անտիոքոս Թեոսի թագավորության 11-րդ տարին Եվսեբիոսի մոտ համընկնում է 250 թ. (մ. թ. ա.), իսկ Խորենացու մոտ՝ 263-ը (մ. թ. ա.)։

Հարցի այսօրինակ մեկնաբանումն իր հերթին երկուստեք արդարացվում է պատմականորեն։ Իրավացի է Եվսեբիոսը, որ Սելևկյան հարստության հիմնադրման թվական է համարել 311-ը (մ. թ. ա.), քանի որ այս թվին մահացավ Ալեքսանդր Փոքրը, հետևաբար այս թվականից Սելևկոսը իրավունք կունենար պաշտոնապես թագավոր հռչակվելու։ Իրավացի է նաև Խորենացին, որովհետև Սելևկոսը Ալեքսանդր Մակեդոնացու այն զորավարներից էր, որը նրա մահվանից անմիջապես հետո իշխանություն ստացավ Արևելքում։ Այստեղ հատկապես ուշադրավն այն է, որ երկուսն էլ հաստատում է Եվ. Կեսարացին։ Վերևում ասվեց, որ նա Սելևկոս Նիկատորի թագավորության սկզբնատարի է համարել 311 թ. (մ. թ. ա.)՝ (12 տարի անց Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից), այն էլ մի քանի անգամ կրկնելով և ցանկանալով ավելի հիմնավորել այդ թվականը։ Սակայն այս չի խանգարել նրան, որ Սելևկոսի թագավորության առթիվ հաղորդի նաև հետևյալը։ Խոսելով Մակեդոնացու աշխարհածավալ տերության բաժանման մասին և անդրադառնալով Սելևկյաններին, նա գրում է. «Բայց Լիդիաստանի հանդէպ Թրակացւոց կողմանց Լիւսիմաքոս թագաւորեաց. իսկ վերնոց կողմանցն և Ասորւոց Սելեկոս և ունէին Երկոքեան Ճորդի շորեքտասանեւորդի ողոմպիադին յառաջնում ամին»[43]։

Այս վկայության կարևորությունը ոչ միայն Սելևկոսին Մակեդոնական հզորության բաժնետեր ճանաչելն է, այլև այն, որ Եվսեբիոսը նրան թագավոր է համարել և այդ թագավորությունը հաշվել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականից՝ 323 թ. (մ. թ. ա.)։ Ուրեմն բացառված չէր, որ Խորենացին էլ կարող էր միևնույն փաստը վերարտադրել այնպես, ինչպես տվյալ դեպքում հասկացել է Եվսեբիոս Կեսարացին։

Բացառված չէր նաև այն, որ Սելևկոսը իր իշխանության տարիները (այն է՝ Ալեքսանդրի մահվանից մինչև 311 թ. (մ. թ. ա.) զումարեր իր թագավորության տարեքանակին։ Հավանական է, որ այսպես էլ արձանագրված է եղել

---

43 Եվսեբ, Կեսարացի, Ժամանակագրութիւն, մասն Ա., էջ 344։

պատմական այն սկզբնաղբյուրում, որից (ուղղակի թե անուղղակի) նյութեր են քաղել Եվսեբիոսը և Խորենացին։

Այս ենթադրությունը հավանական է երևում հետևյալ պատճառներով.

ա) Եթե հետևելու լինենք Եվսեբիոսին և Սելևկոսի 32-ամյա թագավորությունը հաշվենք 311 թ. (մ. թ. ա.), ինչպես վկայում են բազմաթիվ սկզբնաղբյուրներ և ինչպես ընդունված է, ապա ստացվում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև 311 թ. ընկած 12 տարին, որը հաստատեց ինքը Եվսեբիոսը, Սելևկոսը գիտակցաբար դեն է նետել միայն այն պատճառով, որ այս ժամանակաշրջանում պաշտոնապես թագավոր կոչվելու իրավունք չուներ։ Անտարակուսելի է, որ այսպիսի պարտաճանաչություն աշխարհի ոչ մի տիրակալ չէր ցուցաբերի, իսկ Սելևկոսը հատկապես, որն, ըստ Մար-Աբասի արաբական քաղվածքների հեղինակի, «երբ թագաւոր եղաւ, այրել տվաւ աշխարհի բոլոր լեզուներով եղած գրքերը»[44]։ Անկասկածելի է՝ ախոյաններից վրեժ լուծելու և իր փառքը հետագա դարերին թողնելու նպատակով։ Ի՞նչը կխանգարեր նրան, որ, մինչև պաշտոնապես թագավոր հռչակվելը, իրականում թագավորած տարիներն էլ գումարեր իր թագավորության տարեքանակին։ Այլ բան է արդեն, եթե 32-ամյա թագավորությունից բացի տեղեկություն լիներ նաև նրա 44-ամյա թագավորության մասին, սակայն այսպիսի տեղեկություն մեզ հայտնի ոչ մի սկզբնաղբյուր չի արձանագրում, կամ էլ՝ 32-ամյա թագավորությունից 20 տարին հաշված լիներ 311 թ. (մ. թ. ա.)։

բ) Եվսեբիոսի վկայություններով Սելևկոսը մահացել է 280, 279 կամ 278[45] թ. (մ. թ. ա.) 75 տարեկան հասակում, հետևաբար Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի սկզբին (336 թ. մ. թ. ա.) նա ընդամենը 16, 17 կամ 18-ամյա պատանի է եղել։ Այս բանը անհավանական է հետևյալ պատճառով՝ դժվար թե 16—18 տարեկան մի անփորձ պատանու վստահվեր զորավարելու անչափ պատասխանատու գործը։ Հակառակ սրա, եթե Սելևկոսի թագավորությունը հաշվենք 323 կամ 322 թ. (մ. թ. ա.), տալով 32 կամ 31 տարվա թագավորության ժամանակաշրջան, ապա նրա կյանքի և թագավորության վերջին տարին կլինի 291-ը (մ. թ. ա.), ծննդյան թիվը՝ 365 թ. (մ. թ. ա.), հետևաբար Մակեդոնացու արշավանքի սկզբին նա 29—30 տարեկան էր, որն առավել հավանական է։

գ) Եվսեբիոսի մոտ Ալեքսանդր Մակեդոնացու մյուս զորավարների թագավորությունը հաշված է նրա մահվանից անմիջապես հետո։ Այսպես, Պտղոմեոս Լագոս՝ 323, 322 կամ 321-ից (մ. թ. ա.)[46]. Փիլիպոս Արեղոս՝ 323 կամ 322-ից (մ. թ. ա.)[47], Լյուսիմաքոս՝ 323-ից (մ. թ. ա.) և ինչո՞ւ միայն Սելևկոսին 311-ից (մ. թ. ա.)։

դ) Վերևում տեսանք, որ Խորենացուն հետևող հեղինակները ոչ թե սոսկ ընդօրինակել էին, այլ գիտակցաբար ընդունել էին նրա տեսակետը։ Ուստի, անկասկածելի է դառնում, որ նրանք Եվսեբիոսից ու Խորենացուց զատ այլ աղբյուրներ կունենային՝ մեկին ժխտելու և մյուսին ընդունելու համար։

ե) Մակեդոնացու մահվան թվականը իբրև Սելևկոսի թագավորության սկզբնատարի ընդունել են ոչ միայն Խորենացին, իրեն հետևող հեղինակները և

---

44 Տե՛ս «Արարատ», էջմիածին, 1903, հուլիս։

45 Եվսեբ. Կեսարացի, Ժամանակագրութիւն. մասն Ա, էջ 344, մասն Բ, էջ 230։

46 Նույն տեղում, մասն Ա, էջ 237, մասն Բ, էջ 224, 228 և այլն։

47 Նույն տեղում մասն Ա, էջ 325—326, 236—237, մասն Բ, էջ 224 և այլն։

Եվսեբիոսը իր վերոհիշյալ տեղեկությամբ, այլև Սեբեոսի[48] աշխատությամբ մեզ հասած առաջին ու երկրորդ գլուխների հեղինակը[49]։ Արշակունիների անկախացման վերաբերյալ հիշյալ հեղինակի տեղեկությունները, որոնց կանդրադառնանք քիչ հետո, առանձնակի նշանակություն ունեն, քանի որ Խորենացուն զուգահեռ մենք ունենք մեկ ուրիշ հեղինակ, որը նրանից անկախ միևնույն սկզբնաղբյուրը վերարտադրել է համարյա այնպես, ինչպես Խորենացին[50]։

Սակայն քննարկվող հարցի համար կարևորն այն չի, թե Սելևկոսի թագավորության սկզբնատարվա համար ո՞ր թվականն է ընդունելի՝ 311-ը (մ. թ. ա.), թե 323-ը՞, մենք էլ այս առթիվ առաջ քաշված ենթադրությունները վերջնական չենք համարում, կարևորն այն է, որ Խորենացին նկատի է ունեցել վերջինը և այս մեկնակետով կառուցել Արշակունիների ժամանակագրությունը։ Եթե անդամ համոզված լիներինք, որ Խորենացին այս հարցում սխալվել է, դարձյալ իրավունք չէինք ունենա նրա ժամանակագրությունը բացատրել մեկ ուրիշ հեղինակի, ներկա դեպքում Եվսեբիոսի վկայություններով։

Այսուհանդերձ, Խորենացին էլ Սելևկոսի թագավորության սկզբնատարվա հարցում ցուցաբերել է յուրահատուկ մոտեցում։ Ուսումնասիրությունից երևում է, որ Խորենացին Սելևկոսի թագավորության սկիզբ է համարել ոչ թե 323, այլ 322 թվականը (մ. թ. ա.)։ Այս ենթադրության համար հիմք է ծառայում Անանունի հետևյալ վկայությունը։ «Եւ եղև մահուանն Ալեքսանդրու կայսեր Մակեդոնացւոյ ծառայեցին Պարթևք Մակեդոնացւոյ ամս ԿԱ (61)։ Քանզի թագաւորեաց Սելևկիոս Նիկանորՙ ի Բաբելոն ամս ԼԸ(38)[51]։ Անտիոքոս Սոտեր ամս ԺԹ (19)։ Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ (10)։

Եւ յամի մեծասաքեւորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոյ»[52]։

---

48 Սեբեոս անունը օգտագործելու ենք պայմանականորեն, նկատի ունենալով Գ. Արզարյանի «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը» աշխատությունը։

49 Շնորհիվ Գ. Արզարյանի, պետք է վերջնականապես լուծված համարել Անանունի առեղծվածը։ Ամբողջովին համամիտ ենք Արզարյանին, որ Սեբեոսի աշխատության առաջին ու երկրորդ գլուխները ոչ մի կապ չունեն Սեբեոսին վերագրված բուն պատմության հետ և նրան սոսկ պատահականորեն են միացվել (տե՛ս «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը», Երև. փան, 1965, գլ. 2-րդ, Ա)։

50 Անանունի և Խորենացու աղբյուրի հարցը, որը տարակարծիքների տեղիք է տվել անցյալում, մոտենում է իր վերջնական լուծմանը։ Ընդունելին Գալուստ Տեր-Մկրտչյանի և գերմանացի գիտնական Ֆեթթերի պնդակետն է, որի համաձայն Խորենացին ու Անանունը իրարից անկախ օգտագործել են միևնույն սկզբնաղբյուրը։ Այս տեսակետը վերջերս զարգացվել է Գագիկ Սարգսյանի կողմից (տե՛ս «Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965, էջ 14—15) և հիմնավորվում է Արզարյանի ենթադրություններով, որով Սեբեոսի «Պատմության» առաջին ու երկրորդ գլուխների հեղինակը գրել է Խորենացուց առաջ, ինչպես նաև մի շարք այլ փաստերով, որոնց անդրադառնալը այս հոդվածի հնարավորություններից դուրս է։

51 Սելևկոս Նիկատորի թագավորության տարեթվանակն այստեղ ենթարկվել է փոփոխության։ Նախապես եղել է ոչ թե ԼԸ (38), այլ ԼԲ (32)։ Իրեն ապացույց նկատի ունենք նույն վկայության առաջին մասը։ Եթե 61 տարի է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև Պարթևների անկախացումը, իսկ նրա վկայության 2-րդ մասն էլ, ինչպես տեսնում ենք, բացահայտումն է 1-ինի, հետևաբար 61 տարի էլ պետք է լինի 2-րդ դեպքում՝ Սելևկոս Նիկատոր 32 + Անտիոքոս Սոտեր 19 + Անտիոքոս Թեոսի 10-ը — 61։ Այս հարցի մասին տե՛ս Գ. Արզարյան, նշվ. աշխ., էջ 145—46։

52 Սեբեոս. Պատմութիւն, Երևան, 1939, էջ 7—8։

Անանունի այս վկայությունը հիմնականում համանման է Խորենացուն։ Բացառությամբ ընդհանուր համանմանությունները, առաջին տարբերությունը, որը նկատվում է նրանց միջև, այն է, որ Խորենացու մոտ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև Արշակունիների անկախացումը հաշված է 60 տարվա ժամանակաշրջան, իսկ Անանունի մոտ՝ 61 տարվա։ Երկրորդ տարբերությունը՝ Խորենացու մոտ Սելևկոս Նիկատորին տրված է 31-ամյա թագավորություն, Անանունի մոտ՝ 32։ Ինչպես երևում է, տարբերությունն այստեղ մեծ չէ, այն դրսևորվել է ընդամենը մեկ տարվա շուրջ, որին կարելի էր անգամ ուշադրություն չդարձնել։ Սակայն այսքան աննկատ տարբերությունն էլ իրականում անչափ արժեքավոր է, քանի որ այն բանալի է հետևյալ հարցերի լուսաբանման.

ա) Ո՞րն է Անանունի և Խորենացու այս մեկամյա հակասության պատճառը։

բ) Սելևկոսի թագավորության ո՞ր տարեքանակն է եղել սկզբնաղբյուրում՝ 32-ը՞, թե 31-ը՞։

գ) Երբվանի՞ց սկսել նրա 31-ամյա թագավորությունը։

Իբրև պատասխան այս հարցերի, դիմենք հետևյալ նախնական ենթադրության։

Հանրահայտ է, որ Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ 323 թ. (մ. թ. ա.) վերջերին։ Շատ հավանական է, որ Խորենացին չի հաշվել այն վերջին ամիսները, որոնք իբրև մեկ լրիվ տարի գումարված են եղել Սելևկոսի թագավորության տարեքանակին։ Կրճատելով Սելևկոսի մեկ տարին (ամիսներ), անհրաժեշտություն է առաջացել նույնքանով էլ կրճատել Ալեքսանդրի մահվանից մինչև Արշակունիներն ընկած ժամանակաշրջանի տևողությունը։

Այս է բուն պատճառը, որ Անանունի մոտ Սելևկոսին տրված է 32 տարվա թագավորության ժամանակաշրջան, իսկ Խորենացու մոտ՝ 31։ Միաժամանակ, Անանունի մոտ Ալեքսանդրից Արշակունիներն ընկած ժամանակաշրջանի տևողությունը 61 տարի է, Խորենացու մոտ՝ 60։ Այս ենթադրությամբ արդեն, ինչպես տեսնում ենք, երկու հեղինակներն էլ Արշակունիների անկախացման տարեթիվ են մատնանշում 262-ը (մ. թ. ա.), միայն այն տարբերությամբ, որ Անանունը Սելևկոսին 32 տարի տալով սկսել է 323-ից (մ. թ. ա.), իսկ Խորենացին 31 տարի տալով՝ 322 թ. (մ. թ. ա.)։

Այսպիսով՝ Անանունի և Խորենացու վկայությունների մեկամյա տարբերությունը Խորենացու քննական մոտեցման հետևանք է։

Անանունի և Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրում (երկուսի վկայությամբ էլ Մարաբասյան մատյանն է) Սելևկոսի համար գրանցված է եղել 32-ամյա թագավորության ժամանակաշրջան՝ հաշված 323 թ. (մ. թ. ա.), որի մեկ տարին (ամիսներ) Խորենացին իրավացի կերպով չի հաշվել։

Խորենացու վկայած Սելևկոսի 31-ամյա թագավորությունը պետք է հաշվել 322 թ. (մ. թ. ա.), հետևաբար Արշակունիների անկախացման նրա ընդունած տարեթիվ համարել 262-ը (մ. թ. ա.)։

Համոզված ընդունում ենք այս թվականը, որովհետև այն բխում է Խորենացու վկայություններից, Խորենացուց անկախ ընդունել է միևնույն աղբյուրն օգտագործող Անանունը, և ոչ միայն ընդունել, այլև սկզբունքորեն Խորենացու տեսակետը պաշտպանել են հետագա հեղինակներից շատերը։

Սակայն այսքանով չեն սպառվում փաստերը հօգուտ 262 թ. (մ. թ. ա.)։ Հիմնական ու բազմակողմանի ապացույցը Խորենացու «Հայոց պատմության»

երկրորդ ու երրորդ գրքերի ժամանակագրական համակարգն է։ Ուստի, մեր խոսքն ավարտած կհամարենք, երբ կքննարկենք այդ համակարգին առնչվող բոլոր հիմնական հարցերը և վերականգնած կլինենք Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգն իր ամբողջությամբ։

ГОД УСТАНОВЛЕНИЯ ДИНАСТИИ ПЕРСИДСКИХ АРШАКИДОВ ПО ДАННЫМ МОВСЕСА ХОРЕНАЦИ

Л. П. ШАГИНЯН

(Резюме)

Год установления династии персидских Аршакидов является единственной исходной хронологической датой «Истории Армении» Мовсеса Хоренаци. Точное выяснение этой даты в определенной степени поможет восстановлению хронологической системы книги Хоренаци.

На основании свидетельств самого Хоренаци и ряда последующих авторов в статье показывается, что этой исходной датой является 262 г. н. э. и что в данном вопросе Хоренаци и Евсевий Кесарийский придерживались диаметрально противоположных позиций.